

**Կենսուլորտ.** Ե. այն ուրտն է, որի կազմությունը, կառուցվածքը և էներգիայի ու նյութի փոխանակությունը պայմանավորված են օրգանիզմների գործունեությամբ: Ընդգրկում է կենդանի օրգանիզմների անցյալ և ներկա ապրելու ողջ ուրտը: Կենսուլորտում գոյություն ունի ատոմների կենսածին միգրացիա: Կենդանի նյութը այստեղ հանդես է գալիս առանձին (դիսկրետ) օրգանիզմների ձևով:

Ե-ի վրա կա կենդանիների և բույսերի 1,2-ից մինչև 2 մլն տեսակ, որից 1/4-ը կամ 1/3-ը բույսեր են: Կենդանիների մեջ շատ են միջատները՝ մոտ 750000 տեսակ, ապա փափկամորթները՝ 40000—100000 և ողնաշարավորները՝ 60000—70000 տեսակ: Բույսերի մեջ գերակշռում են ծածկասերմերը՝ 150000—300000, ապա սնկերը՝ 70000—100000 տեսակ:

Կենդանիների և բույսերի համատեղ բնութագրման համար օգտագործվում է կենսազանգված կամ կենսաբանական արդյունավետություն հասկացողությունը: Օրգանիզմների տարաբնակեցումը ըստ կենսազանգվածի այլ է, քան ըստ տեսակների: Օրինակ, բույսերի կենսազանգվածը ցամաքում ավելի շատ է, քան կենդանիների: Կենսուլորտը Ե-ի վրա նյութի պայմանների և վիճակի առավել փոփո-



խությունների մարզն է, որն ունի մոզաիկ կառուցվածք և անընդհատ ընդգրկում է նյութի կոշտ, հեղուկ և գազային վիճակները: Կենսաթաղանթի տարածական տեղաբաշխման հիմքում ընկած են կենսացենոզները՝ կենդանի օրգանիզմների և անօրգանական նյութերի տարրերի համալիրները, որոնք զուգորդված են նյութի և էներգիայի փոխանակությամբ: Դա միասնական, կազմակերպված համակարգ է՝ ընդունակ ինքնազարգացման և ինքնակարգավորման: Կենսաթաղանթում նյութը միատարր չէ, այն բաժանվում է օրգ., կենսաձիւնի և քարաձիւնի: Կենդանի նյութը հանդես է բերում մի շարք կենսա-երկրաքիմիական ֆունկցիաներ, որոնցից ամենակարևորի՝ ֆոտոսինթեզի միջոցով արեգակնային էներգիան ներկալվում է երկրակեղևում տեղի ունեցող ֆիզիկաքիմիական պրոցեսների մեջ, ապա՝ վերաբաշխվում սննդի, շնչառության և օրգանիզմների բազմացման միջոցով: Նյութի շրջանառության այդ պրոցեսը ընդգրկում է անօրգանական նյութի հսկայական զանգվածներ: